ԳԼՈՒԽ ԼԳ.

Ամենայն ծայրագոյն պաշտօն յատկապէս տանուտէր, նախարար, դատաւոր, իշխան, սպարապետ, ասպետ հանդերձ խորհրդակցօք, դպրօք, ատենաբանիւք և ամենայն զօրագլխօք մի ոք ստանայցէ, բայց 'ի սեպհական ազգէն հայոց, սեպհական ծնունդ հայաստանեաց մկրտեցեալ 'ի Քրիստոս աւանդութեամբ Սուրբ Եկեղեցւոյ հայաստանեաց։

ԳԼՈՒԽ ԼԴ.

Ամենայն պաշտօնեայ յառաջ քան զատանալ նամակ պաշտօնի իւրոյ պարտ է երդնուլ 'ի վերայ Սուրբ կտակարանի խոստովան լինիլ զինքն սեպհական ազգէն հայոց դաւանութեամբ հայաստանեաց սուրբ Եկեղեցւոյ Քրիստոնեայ գոն, և խոստանալով զինքն կալոյ և ճնալոյ հաւատարիմ տանն հայոց և Ջատագով 'ի վերայ օրինաց կարգադրութեան Հայաստանեաց։

ԳԼՈՒԽ ԼԵ.

'Ի միջի ամենայն փոխանորդաց թէ էկլէզիաստիկ, թէ աշխարհականաց քանի անձինք որ լինիցեն 'ի վերայ նոցայ հանիցեն վիճակ անուամբ հայը հայաստանեաց միայնակ մի, և որում ելցէ